

վասն որոյ անմարթ էր զայնպիսի մա-
տեան հրաշարի և շոյեկան ուսումնա-
սիրաց՝ յայնպիսում պայմանի աղաւա-
ղութեան հրատարակել 'ի լոյս, որով
ոչ ինչ կամ սակաւ յոյժ օգուտ գործէր
ընթերցանելեացն ։

Առ այս հոգ յանձին տարեալ փու-
թով յարդարէր զայն բազում մասամբ
նորոգ թարգմանելով 'ի յունէն Վ. Հ.
Աբրահամ վարդ. ճարեան 'ի Միտ-
բանութենէ ուխտիս. միայն ուր ուրեք
չէր ինչ կարի խոտորեալ հին թարգ-
մանութիւնն մեր 'ի բնագրին իմաս-
տից՝ պահեալ անդանօր զչնորհ և զոճ
և զբառս նախնեացն յիւրում թարգ-
մանութեանն. զի որոց 'ի գիտութենէ
մատենին ունին օգտել չահեսցին 'ի
նորոյն, որ եղաւ 'ի բուն գիրս. իսկ
զհին թարգմանութիւնն կարգեցաք 'ի
ստորե մանրագիր, զի հետախոյզ հա-
յասէրք առցեն և զճաշակ այնր. ինն
և 'ի մեր հին օրինակս ուրեք ուրեք
պակաս էլք, թողար և զոյն այնպէս՝
նշանակեալ միայն 'ի ժանօթութեան.
զի թէպէտ գոյին բազումք 'ի գլխոց
մատենին յայլ և այլ ցրուեալ ճառըն-
տիրս և 'ի հաւաքմունս նախնեաց, սո-
կայն չարարաք ինչ փոյթ զայնոսնէ,
այլ հետեւեցաք միայն միոյ օրինակի՝
որ գտանէր 'ի ձեռագիրս մեր. մինչև
ժամանակաւ ընտրելագոյն ևս ձեռա-
գրի պատահեալ մարթասդուք մեք,
կամ եթէ և այլք, ուղղագոյն ընթեր-
ցուած ընծայել բանասիրաց՝ ըստ
թարգմանչաց հարազատ իմաստից ։
Այս են գլխաւորը յերկասիրութեանց

Եւսեբեայ, զոր այժմ ունիմք 'ի ձեռին.
այլ են և այլ մանր մանր գրեան և
թուղթք՝ զորոց աւելորդ համարիմք եր-
կարել առ տեղեաւս Այսոքիկ զորս
գրեացն նա առ կենդանեաւ իւրով որ
փառաւորեն զանուն իւր. այլ ոչ նոյն-
պէս և զոր գործեացն. զի որչափ հրմ-
ստութեամբն պանծալի եկաց նա, նոյն-
չափ և յիրս և 'ի պայմանս կենացն
թիւրեցաւ. Յազմուկս Արիանոսացն ոչ
գիտաց ունել զանձն յուղիղ չաւիղս,
այլ կամ փառասիրութե անտիւ, կամ
չողովմանք՝ զոր լիով տեսանիցես 'ի վարս
կոստանդիանու՝ առ նոյն կայսր բար-
բառեալ, կամ եկաց միշտ 'ի թիկունս
ոչ այնչափ աղանդոյն՝ որչափ աղանդա-
ւորացն. զի երեկ եթէ և 'ի նիկիական
ժողովի ընկալաւ զբառդ Համագոյ, թէ-
պէտ և 'ի գիրս յայսմիկ և այլուք ոչ
ուղղապէս բարբառի զՀամագոյակցու-
թենէ Որդւոյ ընդ Հօր. Համօրէն յա-
մենայն չփոթս երեկ սա յառաջագէմ,
և 'ի ժողովս իսկ այսր և անգր և 'ի ժո-
ղովակս՝ զանձն 'ի ներքս մղէ. տեսանի
'ի ժողովն Անտիոքայ (330), ուր խըն-
դիրք և յուզմունք լինին 'ի պատճառս
ընկենլոյ զԵւստատիոս յաթնող, երեկ
'ի Տիւրոս (335) մարառել ընդդէմ
սրբայն Աթանասայ. Այսչափ նշանաւոր
անցք կենաց նորա են մեզ ժանօթք,
իսկ այլ ոչ ինչ յիւրոց կենացն. այլ զի
և զկնի հայաժանացն Գաղեթիոսի կայ-
սեր ընտրեցաւ նա եպիսկոպոս Կեսա-
րիոյ Պաղեստինացւոց յամի 314, այլ
եթէ զինչ գործեաց յայնժամ՝ անգի-
տանալք ։

ՍՈՒՆԻՔ ԾԱՂԿԻՄՈՒՄ

Յանկիչատակ ժամանակաց սկսեալ
մինչև մեր օրերը, միշտ իմաստնոց յար-
գի և ընդունելի եղած է կենդանեաց և
անշունչ արարածոց բերանը խօսք գնել,
և անոնց օրինակովը՝ մարդկային տկա-

րութիւնները և պակասութիւնները
ուզել. որով գրեթէ ամեն հին և նոր
ազգաց մէջ կը գտնուին Առակներ, զա-
նոնք կարգաւորող և կարգաւորեալ ու
ճով գրի առնողներն ալ ըսուեր են Ա-

առակախօսք : ինչպէս Արարացիք և թուրք ունեցեր են իրենց Լոքմանը և Նասրէտտինը, Յոյնք իրենց Եսովպոսը, Լատինք իրենց փեղրոսը, Գաղղիացիք իրենց աննման Լաֆոնթէնը, Գերմանացիք իրենց Լէսփինկը և Ռուսք իրենց Քախլովը : այսպէս մեր ազգն ալ ունեցեր է ժամանակ ժամանակ իր առակախօսները, որոցմէ ոմանք ընտիր և գեղեցիկ հայկաբան լեզուով, և այլք հնարագիւտ իմաստիւք գրեր են : ինչպէս Մխիթար Գոյը, Ողիմպիանու առակաց հեղինակն և վարդան :

Մեր օրերը գրուած և հրատարակուած առակագրոց մէջ նշանաւորք են փեղրոսի հայերէն թարգմանութիւնն և վրոյրի Որժգդանայ առակներն : այլ ասոնք երկուքն ալ դրաբար լեզուով գրուելնուն պատճառաւ, ամենուն իմանայի չեն : Քախլով առաւ անուանի առակախօս հեղինակին՝ ամբողջ հայերէն ընտիր թարգմանութիւնն աշխարհաբար լեզուով, մեր արդի լեզուին և մատենագրութեան ճոխութիւն մ'է :

Սկզբան առակախօսք իրենց առակները պարզ և արձակ լեզուով գրեր են, որոնց և մեզի ժամանակակից գերմանացի Լէսփինկ առակախօսը հետեող գտնուեցաւ, որ և կը պախարակէ այլոց ոտանաւոր տողերով բանաստեղծական ոճը : այլ հասարակաց միշտ ընդունելի և ակորժելի եղած են ոտանաւոր առակներն : Այս ոճով առաջին գրողն եղած է փեղրոս՝ Ալգոստոս հռովմայեցի կայսեր ազատագիրն, որ Եսովպոսի արձակ առակները՝ բանաստեղծօրէն ոտանաւորի առնելով, ակորժելի ընծայած է բանասիրաց : նոյն յոյն Եսովպոսին առակները, մեծաւ մասամբ, Գաղղիացւոց Լաֆոնթէն առակախօսն իր հայրենեաց լեզուին ընտիր ոճերով բանաստեղծաբար գրելով՝ անմահա-

ցուցեր է իր անունը : նոյն առակները գեղեցիկ ոտանաւոր տողերով գրած է և առաւ առակախօսն Քախլով : նոյնպէս համարեալ թէ ըրած են և այլ ազգաց առակախօսք, որով և առակք աւելի յարգ առած և մեծապէս ալ օգտակար եղած են և կ'ըլլան տղայոց համար : վասն զի տղայք ոտանաւոր գրուած առակները, ոչ թէ միայն ակորժելով կը կարդան, այլ շատ հեզ և 'ի բերան կը սորվին : և տղայոց այս առակ սորվիր կամ լաւ ևս սորվեցնելը, գրեթէ դաստիարակութեան մասն սեպուած է : Եւ որովհետեւ ազգիս մէջ տակաւին չէ հրատարակուած առակաց հաւաքում մը՝ յայլ և ոյլ հեղինակաց, և այն ալ աշխարհիկ լեզուով, այս պատճառաւ այլեւայլ ժամանակ թարգմանաբար գրած առակներս 'ի մի հաւաքելով փոքրիկ հատորիկ մը ձևացուցի, յուսալով որ պիտանի ծառայութիւն մ'ըլլայ ազգային մանկանց :

Այս առակներէն ոմանք թագմաւի պին մէջ տպուած են, և մեծաւ մասամբ հետեողութիւնք են Եւրոպացի առակախօսից : ինչպէս Եսովպոսի, փեղրոսի, Քախլովայ, Լաֆոնթէնի, Ֆլորիանու, և այլոց, կան և քանի մը ինքնագիր առակներ ալ : Երեք մասն բաժնեցի գրքոյկս, տղայոց գիւրութեանն համար : առաջինին մէջ՝ համառօտ գիրքի մաց առակներն ամփոփելով, երկրորդին մէջ երկար և բարձրագոյն իմաստներով առակները, իսկ երրորդին մէջ քանի մը դրաբար պոսակներս, միայն օրինակի համար :

Եթէ համառօտ գրքոյկս ունենայ յարգ ազգայնոց առջև և ծառայէ իր վախճանին, անշուշտ ուրիշ անդամ աւելի ճօխացեալ 'ի լոյս կ'ընծայի յօգուտ ազգային մանկաւորն :

Հ. ՔԵՐ. Վ. ՔԱՆԵԼԵՐԵԱՆ

